

## Ժորժ Սանդր հայ գրականության արձագանքներում

*19-րդ դարի ֆրանսիացի ականավոր գրող Ժորժ Սանդրի ստեղծագործությունները իրենց թարմությամբ, մարդասիրությամբ, փիլիսոփայությամբ, խորությամբ, հասարակության մեջ կնոջ վիճակի և նրա իրավունքների պաշտպանությամբ մեծ հետաքրքրություն է առաջացրել 19-րդ դարի թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ գրական շրջանակներում: Դրա վառ ապացույցն է նրա բազմաթիվ վեպերի հայերեն թարգմանությունները և ստեղծագործությունների մեկնաբանություններն ու վերլուծությունները ժամանակի մամուլում, որտեղ հոդվածագիրների ու թարգմանիչների կողմից գովերգվում է նրա լեզուն: Պալասանյանն անդրադառնալով Ժ. Սանդրի գեղեցիկ լեզվին ասել է, որ Ժ.Մ. Ռուսոյից հետո ոչ ոք այսպիսի լեզվով չէր գրել Ֆրանսիայում, որն ավելի ծանր պարտականություն է դնում թարգմանչի վրա:*

*Բանալի բառեր. թարգմանություն, լեզու, մեկնաբանություն, վերլուծություն, գրող, հոդվածագիր, կնոջ իրավունքների պաշտպանություն*

Մինչ կթարգմանվեին Ժ. Սանդի ստեղծագործություններից մի քանիսը, նրա մասին մի քանի հոդվածներ լույս տեսան հայկական մամուլում: Հայերեն լեզվով առաջին արձագանքը եղել է Փարիզում լույս տեսնող «Մասյաց աղավնի» գրական ամսագրի 1863թ-ի համար 16-ում «Փարիզյան սուրհանդակ» խորագիրը կրող շարքում՝ ազդարարելով Ժ. Սանդի «Օրհորդ լա Քենտինի» վեպի լույս տեսնելու մասին, ուր գովերգվում է հեղինակի հանճարեղ ու գորավոր գրիչը, որը նա գործածում է յուր ծուռ ու շիտակ կարծիքներն արտահայտելու համար: «Մասյաց աղավնին» ամսագիրը նույն՝ 1863թ-ի, 19-20 համարներում «Փարիզյան սուրհանդակ» բաժնում տպագրել է Կոնստանս Վերիերի (Constance Verrier) հոդվածի հայերեն թարգմանությունը, որտեղ հոդվածագիրը ազդարարում է Ժ. Սանդի նոր վեպի հրատարակության մասին, որի անունը, ցավոք, չի նշվում: Հոդվածում կարդում ենք, որ Ժ. Սանդը ցանկացել է ցույց տալ վիպասանական գրվածքների օգտակարությունը օրհորդների վրա, որոնք արհամարհվում են նրանց կողմից՝ որպես վնասակար բան իրենց բարոյականության համար: Ժ. Սանդը գտնում է, որ լավ վեպ կարդալով աղջիկն օգուտ է ստանում, քանի որ սովորում է կյանքի փոթորիկները: Մինչդեռ հոդվածի հեղինակը հակառակն է գտնում՝ ասելով, որ կյանքի փոթորիկներն աղջկան բացահայտելու համար կան մայրը, հայրը, դաստիարակը: Նա գտնում է, որ, թեկուզ լավ վեպի միջոցով կապվելով վիպասանությանը, աղջիկը կսկսի կարդալ նաև անբարո վեպեր, որոնցով լցված է աշխարհը:

Այնուհետև Թիֆլիսում լույս տեսնող «Հայկական աշխարհ» գրական և իմաստասիրական օրագրի 1869թ-ի 10-11 համարներում տպագրվեց օրիորդ Ելիսաբեթ Բայիսօղօլեանի թարգմանությամբ «Տիկին Ժորժ Չանդ» հոդվածը, որը հետևյալ կերպ է սկսվում. «Քանի մի տարի առաջ Ժորժ Չանդի վերայ կարծիքները բոլորովին գանազան էին. յարգողները բարձրացնում էին նորան մինչև երկինք, իսկ թշնամիները տրորում էին անբարոյականութեան եւ ուրիշ շատ պակասութիւնների մեջ: Նաև Ֆրանսիայում շատերը մինչև այժմ չեն համաձայնում Ժորժ Չանդը մեր դարի կին գրողներից ամենալաւը ընդունելու»: Հեղինակը նրան իր մտքերի նորությամբ, լեզվի գեղեցկությամբ համեմատում է Ժ. Ժ. Ռուսոյի հետ: Ըստ հոդվածագրի, նա առաջադրում է նոր և հարկավոր հարցեր: Եթե նա սխալվում է, ապա դա մարդկությանը բարություն ցանկանալու հետևանքով է: Այնուհետև շարադրում է վիպասանուհու բուռն, եզակի և շատ հետաքրքիր կյանքի պատմությունը և մեկնաբանում է գրողի ստեղծագործական կյանքի ամենավառ և բեկումնային ստեղծագործությունները: Մեջբերում է Բելինսկու կարծիքը. «Ժորժ Չանդը կանանց փաստաբանն է, ինչպես Շիլլերը ամբողջ մարդկությանն է» կամ ֆրանսիացի քննադատ Սենտ-Բյովի՝ «Ժորժ Չանդի պես հեղինակները իւր հանճարի օգնութեամբ գուշակում են ապագայ ժամանակի պահանջունքը, եւ նոցա մեղադրել այս բանում ոչ ոք իրավունք չունի»: Հոդվածագիրը խոսում է գրողի մարդասիրության մասին, որը հնչում է նրա ամեն մի տողում, ինչպես նաև կնոջ սրտի խորին ու զարմանալի իմացության՝ ըն-

թերցողին գրավելով այդ էության նրբամիտ ու մանրամասն քննումներով: Այնուհետև անդրադառնում է Ժ. Սանդի «Լե-լիա» վեպին՝ ասելով, որ քննադատողները խոստովանում էին, որ այս վեպում հեղինակի տաղանդը հասել է մեծ բարձրության՝ Ժ. Սանդին համարելով ապագա մարդկության բարոյականության նորոգման գուշակ: Հոդվածագիրը չի մոռանում «Լելիայի» գեղեցիկ ու փայլուն լեզվի մասին և գտնում է, որ այս վեպը կարելի է դասել գեղեցիկ վիպասանությունների թվին: Այնուհետև ներկայացնում է Ժ. Սանդի սրտին շատ մոտ կնոջ անկախության խնդիրը՝ չմոռանալով ավելացնել, որ դա ամուսնության մերժում չէ, այլ ամուսնության ժամանակ առավել օտար նպատակների այպանում: Այնուհետև ընթերցողի ուշադրությունը հրավիրում է Ժ. Սանդի բնության նկարագրությունների վրա՝ գովերգելով դրանք առանձնապես «Մոպրա», «Անդրե», «Միմոն» վեպերում: Մեջբերում է Բելինսկու խոսքը «Մոպրայի» մասին. «Սա նույն ինքն անձկությունն է, նույն ինքը գեղեցկությունը, նույն ինքը կյանքը, նույն ինքը խելքը, և նույն ինքը բանաստեղծությունը»: Մեկընդմեջ կենսագրական փաստեր ներկայացնելով շարունակում է անդրադառնալ ստեղծագործություններին՝ առանձնացնելով «Կոնսուլետ», «Կոմսուիի Ռուդոլֆտաստդ» վեպերը: Հոդվածն ավարտվում է կանանց ազատություն քարոզող տիկին Էժենի Ռեդիկուրի խոսքերով. «Ամենքը գիտեն, թե մեր ժամանակի ամենամեծ գրականական արհեստագետը կին է – Ժօրժ Զանդ»:

Ֆրանսավեզու հայ հասարակությունը, իհարկե, կարդացել էր Ժ. Սանդի ստեղծագործությունները, իսկ վերոհիշյալ

հողվածները ազդարարում էին մեծ հռչակ վայելող ֆրանսիացի կին գրողի տաղանդի, փառքի մասին, սակայն մինչև 1871թ. Ժ. Սանդի ոչ մի ստեղծագործություն դեռևս հայերեն չէր թարգմանվել: Առաջինը եղավ «Օրիորդ լա Քենտինի» վեպը, որը 1871թ. թարգմանեց Գր. Չիլինկիրյանը և այնուհետև տպագրվեց Ջմյունիայում: Այնուհետև՝ 1875թ-ին, Գ. Մսերեանի թարգմանությամբ կրկին Ջմյունիայում տպագրվեցին Ժ. Սանդի «Լեոնե Լեոնի» և «Ֆլավի» վեպերը: Իհարկե, դժվար է բացատրել ստեղծագործությունների ընտրության սկզբունքը, քանի որ հայտնի է, որ Ժ. Սանդը հռչակ ձեռք բերեց իր առաջին՝ «Ինդիանա» վեպով, արտահայտելով իր հոգու պոռթկումը կնոջ ներքին և արտաքին ազատության մասին:

«Լեոն Լեոնի» վեպն ունի Գ. Մսերեանի կողմից գրված կարճ առաջաբան: Թարգմանիչն այն համեմատում է Աբբա Պրևոյի «Մանոն Լեսկո» վեպի հետ: Նա գտնում է, որ այս երկու վեպերը միևնույն կրթերն ու զգացմունքներն են նկարագրում՝ ընթերցողին հանձնելով մի սիրո պատմություն, որը դաժանորեն կապված է անհավատարմության, շվայտ կյանքի հետ, մի սեր, որը բուռն է ու անզուսպ, սակայն որը դիմակայում է ու հավետ վառվում ամեն տեսակի փոթորիկների, անթիվ ցավերի, բազում տառապանքների ու անարգանքների դեպքում:

«Ֆլավի» վեպի հայկական տարբերակն էլ ունի առաջաբան՝ գրված Գ. Մսերեանի կողմից: Այստեղ արդեն թարգմանիչը ընթերցողին է ներկայացնում Ժ. Սանդ գրողին ամ-

բողջությամբ: «Սույն դարու մեջ, Ֆրանսիայի իգական պարծանքն ու շուքն, անսպառ հանճարը, սեգ ու դաշնաւոր բանահիւսը որ Հոմերեան վսեմութեամբ, Ժիւէնալի հեգնով և Պայրնեան ծիծաղով ընթերցողը կը հիացնէ, կին մ'է, մուսայից քոյր մը՝ որ... մտած է գրական ասպարեզին մեջ, ուր յառաջանալու համար, գրիչ մը ստէպ նիզակի պաշտօն պետք է վարել՝ մանաւանդ կնոջ մը ձեռքին մեջ՝ որ շատերու աչքին տկար արարած մ'է: ...Ժօրժ Սան բարձր արհեստագետ մը չէ միայն, այլև մեծ վերանորոգիչ մը ու աննման խորհող մը»: Այսպէս է գնահատում Գ. Մսերեանը Ժ. Սանդին, որից հետո մանրամասնորեն ներկայացնում է վիպասանուհու կյանքը ծագումից, ծնունդից մինչև 1875թ., երբ նա 71 տարեկան է: Շարադրում է նրա հետաքրքիր կյանքի պատմությունը, ներկայացնում է ստեղծագործությունը, որոնք անբակտելիորեն կապված են, քանի որ նրա հախուռն, համարձակ, հետաքրքիր կյանքը, հայացքների փոփոխությունն իրենց արտացոլումն են գտել նրա ստեղծագործություններում: Այս մեկնության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձված նրա «Ինդիանա» վեպին, որն «Աննման հռչակ մը հանեց», «Գիրք մը ելած չէ կ'ըսէ Էօթեն տը Միրըքուր (հեղինակին գրեթէ թշնամիներէ մին) որ հասարակաց հետաքրքրութիւնը ան աստճանի գրգռէ»: Այնուհետև անդրադառնում է «Վալանտին» վեպին. «Ասոր նպատակն ալ նմանապէս ընկերութեան և ամուսնական օրենքներու կրիտիս մ'էր, թէև նուազ կծու և դառնադի»: Սակայն Ժ. Սանդը, իր երկու վեպերով մեծ անուն հանելով Եվրոպայի մեջ, զարմացրեց ընթերցողներին իր երրորդ՝ «Լե-

լիա» վեպով: «Բասթայի, Տիտրոյի ու Ժան-Ժակ Ռուսոյի գործերէ ի վեր այսպիսի վսեմ գործ մ'ը, հարուստ և շռայլ ոճ մը դուրս եկած չէր»,– ասում է մեծ քննադատը: Ժ. Սանդի կենսագրությունը և ստեղծագործությունները մեկնող բոլոր քննադատներն էլ առանձնացնում են նրա առաջին շրջանի ստեղծագործությունները, քանզի դրանք ազատատենչ, խորը, զգացմունքային հոգու ճիչ էին, պոռթկում: Նույնն էլ տեսնում ենք Գ. Մսերեանի վերջաբանում: Այնուհետև թարգմանիչը կանգ է առնում «Ֆրանսիայով ճանապարհորդի պտույտը» վեպի վրա: Գ. Մսերեանը անդրադառնում է նաև «Կոնսուելո» վեպին՝ ասելով, որ նա ստանձնել էր կանանց ուսուցանելու պաշտոնը: Շարունակելով Ժ. Սանդի կենսագրության կարևոր մասերը՝ չի մոռանում 1848թ. հեղափոխությունը, որից հիասթափված Ժ. Սանդը վերադառնում է իր Նոան կալվածքը: Չնայած քաղաքականության նկատմամբ դրսևորած հետաքրքրությանը և դրան հաջորդած հիասթափությանը, Ժ. Սանդը չի դադարում ստեղծագործել և նրա գեղեցիկ ու բեղուն գրչի տակից դուրս են գալիս բազում վեպեր՝ «Ֆրանսուա լը Շամպի», «Բլօտի», «Բանտօլֆի արձակուրդը», «Ֆլամինօ» և այլն, ինչպես նաև «Իմ կյանքի պատմությունը»: Գ. Մսերեանը իր մեկնությունն ավարտում է Ժ. Սանդի հրաշալի խոսքերով. «Եթէ մարդ աղէկութիւն ընէ ինքնիրմէ գոհ չըլլար՝ այլ կը տեսնէ որ ըրաւ ինչ որ պէտք է ընել, եթէ գէշութիւն ընէ, չգիտնալով կ'ընէ, թե որ աւելի լուսաւորեալ ըլլար յաւիտենապէս չէր ընէր: Ահա մարդ այս նպատակին պէտք է դիմել: Գեշութեան չեմ հաւատար այլ տգիտութեան...»:

Պահպանվել է Թիֆլիսում լույս տեսնող «Փորձ» ազգային և գրական հանդեսի 1877թ. 3-րդ համարում հրատարակված Պալասանյանի ընդարձակ հոդվածը Ժ. Սանդի մասին: Հոդվածը ներկայացնում է գրողի ողջ կյանքը մանկությունից մինչև մահ: Նրա առաջին վեպի ստեղծման ընթացքն և արձագանքները. «Իւր գրականական գործունեութեան առաջին տարիներից արդեն Ժ. Սանը ցույց տվեց, որ հասարակ տաղանդի տէր մատենագիր չէ, այլ մի նուրբ ու խորամուխ հոգեբան, որ կանացի քնքույշ ձեռքով բաց է անում մեր առաջ մարդկային հոգին և ցույց է տալիս նորա լաւ ու վատ, լուսաւոր ու խաւար կողմերը: Նրա հոգուն համակրելի էին այնպիսի բնավորությունները, որոնց հիմքում ընկած էին քնքշությունը, անկեղծությունը, ներքին հոգեկան խանդը և անփորձությունը մարդկային հարաբերությունների մեջ, որոնք գիտեն բուռն կերպով սիրել և ամեն տեսակ վշտերը տանել համբերությամբ: Այդ հատկություններն ավելի հեշտ է մարմնավորել կանացի բնավորությունների մեջ. այդ իսկ պատճառով նրա հանճարի ուժն ու մեծությունը պետք է փնտրել կերտած հերոսուհիների մեջ, որտեղ նա կանգնած է իր պաշտելի թեմայի՝ կնոջ հոգեկան ու հասարակական ազատության խնդրի առաջ, ուր նա ոչ միայն երևելի բանաստեղծ է, այլև քարոզիչ ու մեկնիչ»:

Հոդվածագիրն առանձնացնում է նրա առաջին երկու վեպերը՝ «Ինդիանան», «Վալանտինը», որտեղ Ժ. Սանդը հանդես է գալիս որպես իր սեռի անողոք և համառ պաշտպան, որի գլխավոր առաքինությունը համարում է սերը – *l'amour c'est la vertu de la femme*. Նրա այդ ժամանակաշրջանի բնո-

րոշ արձագանքն է համարում Ժ. Սանդիի հետևյալ բացականչությունը. «Խեղճ կանայք, խեղճ հասարակություն ուր սիրտը ոչնչում չի գտնում ճշմարիտ առաքինություն, բայց եթե ամեն տեսակ պարտավորությունների մոռացման մեջ»: Իհարկե, հողվածագիրն իր դիպուկ մտքով առանձնացնում է Ժ. Սանդիի այն գաղափարը, որ կնոջ դրությունը բարվոքելու միակ հնարը հասարակական փոփոխության ու վերանորոգման մեջ է՝ Ժ. Սանդին, իրավամբ, անվանելով հասարակական ախտերի բանաստեղծ: Իսկ այդ ախտերը խորությամբ ճանաչելու համար հարկ էր ապրել, թափանցել դրանց մեջ և հասկանալ, որ որտեղ Աստված և երկինք էր որոնում, դրա փոխարեն կասկած ու դժոխային հուսահատություն էր գտնում:

Անշուշտ, հողվածագիրն անդրադարձել է «Լեվիա» վեպին, որով, ըստ Պալասանյանի, նա ուղղակի պատերազմ հայտարարեց հասարակությանը՝ մերկացնելով հասարակական կյանքի փտած ու նեխած վերքերը: Ժ. Սանդի վրա մեծ ազդեցություն են ունեցել Պիեր Լերուն և Ֆելիսիեն դը Լամընեն եղբայրության և մարդասիրության քարոզներով: Այս հայացքներն ավելի բացահայտ արտահայտվեցին նրա երկու վեպերի՝ «Կոնսուելոյի» և «Կոմսուհի Ռուդոլֆտադտի» մեջ: Այնուհետև անդրադառնում է նրա գյուղական կյանքին նվիրված ստեղծագործություններին: Վերջացնելով նրա մասին թերևս հայերենով տպագրված ամենախորն և ամբողջական վերլուծությունը՝ Պալասանյանը մեջբերում է մի նշանավոր մատենագրի խոսքերը. «...Սանի վեպերը արտահայտում են մի զորավոր հոգու, որ ձգտում է

դեպի ճշմարտություն, մի հոգու, որ համաշխարհային է և ծարավ է հոգեկան ազատության, դրանք խոստովանություններ են մի սրտի, որ փորձել է բոլոր կրթերն ու տանջանքները, որ միշտ որոնում է սեր և միշտ խաբվում է, շատ շուտ խաբվում է, շատ շուտ հուսահատվում է և միշտ նոր հայացքով է վառվում, որ ամփոփել է իր մեջ կնոջ սրտի խոր զգացմունքները և այր մարդու սրտի զորությունը, որի համար սերը փիլիսոփայություն է և մարդկությանը ծառայելը՝ նրա կրոնը»: Իհարկե, Պալասանյանը անդրադառնում է նաև Ժ. Սանդի գեղեցիկ լեզվին՝ համարձակվելով ասել, որ Ժ. Ժ. Ռուսոյից հետո ոչ ոք այսպիսի լեզվով չէր գրել Ֆրանսիայում, որն ավելի ծանր պարտականություն է դնում թարգմանչի վրա, որովհետև ընտիր և միևնույն ժամանակ պարզ մտքերը միանգամայն պարզ լեզվով է արտահայտել Ժ. Սանդը: Պալասանյանի կարծիքով հայ թարգմանիչներից ոչ մեկին չի հաջողվել ի կատար ածել այդ պայմաններից և ոչ մեկը:

1882թ. Թիֆլիսում լույս տեսնող «Արձագանք» շաբաթաթերթի 15-րդ համարում հայերեն լույս տեսավ Ժ. Սանդի «Գարիբալդի» վեպը: Հեղինակը վեպի առաջին հատվածը գրել է 1859թ. հուլիսին, իսկ երկրորդ հատվածը՝ 1860թ. մայիսին Նոանում: Վեպում հեղինակն իր գեղեցիկ լեզվով արտահայտել է հիացմունքն այդ գերմարդու հանդեպ, որն Աստծո կողմից իրեն տրված ֆիզիկական ուժը, խելքը, բարոյական էությունը, հայրենասիրությունը, ազատատենչությունը ի նպաստ է բերել ոչ միայն իր սիրելի Իտալիայի ժողովրդի ազատագրության, այլև Աֆրիկայի, Բրազիլիայի, Ամերի-

կայի ժողովուրդների: Կարծում ենք, որ պատահական չէ ընտրված Ժ. Սանդի այս ստեղծագործության թարգմանությունը, քանի որ այդ ժամանակաշրջանում հայ ժողովուրդն ինչ որ չափով հեղափոխություն էր ապրում՝ լուսավորական, կրոնական, բարոյահոգեբանական, և ազատության, անկախության, նվիրումի, հայրենասիրության խորհրդանիշ համարվող այս մարդու կերպարը կարող էր ոգեշնչել իր հայրենակիցներին:

1882թ. Թիֆլիսում լույս տեսավ Ժ. Սանդի ևս մեկ ստեղծագործություն Ե. Լալայեանցի թարգմանությամբ: Դա «Վարդագույն ամպ» մանկական վիպակն է, որի հիմնական գաղափարը փոքրիկներին աշխատասիրության միջոցով կատարելության հասնելու ուղին ցույց տալն է:

Ժ. Սանդին հայ իրականության մեջ անդրադարձել են նաև 20-րդ դարում: 1930թ. Աթենքում Վ. Ծովակի թարգմանությամբ հրատարակվում է Ժ. Սանդի «Վալանտին» վեպը: Այն տպագրված է առանց մեկնաբանությունների: 1938թ. «Պրոլետար» թերթի համար 149-ը անդրադառնում է Ժ. Սանդին՝ տալով կարճ կենսագրական տվյալներ, բնականաբար անդրադառնալով նրա ստեղծագործության երկրորդ շրջանին, որը սոցիալական բնույթ ունի և սոցիալ-ուտոպիական ուղղվածություն: Հոդվածը Ժ. Սանդին մեկնաբանում է կոմունիստական գաղափարախոսության ելակետից:

1990թ. առաջին անգամ հայ իրականության մեջ թարգմանվում է Ժ. Սանդի առաջին վեպը՝ «Ինդիանան», որն, ինչպես

բազմիցս նշվել է, նրան համբավ, անուն, հռչակ բերեց, ինչպես նաև նոր ժամանակաշրջան բաց արեց գրականության մեջ: Այն թարգմանել է Ն. Վարդանյանը և տպագրվել է Երևանում: Հրաշալիորեն թարգմանելով վեպը՝ թարգմանչուհին նաև ներկայացնում Ժ. Սանդ գրողին: Նա էլ, ինչպես նախորդ մեկնողները, ներկայացնում է գրողի կենսագրության կարևոր շրջանները, ինչպես նաև տալիս է նրա ստեղծագործության բնութագիրը: Նա գրողի 50-ամյա ստեղծագործական գործունեությունը բաժանում է չորս շրջանի.

1. 1831-40թթ.՝ ռոմանտիկ վեպերի շրջան, որոնց իդեալիզմն ունի երեք ակունք՝ սեր, մարդկություն, բնություն:

2. 1840-45թթ.՝ սոցիալական և միաստիկական ստեղծագործությունների շրջան:

3. 1845-48թթ.՝ «գեղջկական» գործերի շրջան:

4. 1848-ից մինչև կյանքի վերջը՝ աշխարհիկ ստեղծագործությունների շրջան:

Ընթերցողին է ներկայացնում նրա կապերն իր ժամանակի նշանավոր մարդկանց հետ, որոնք արտահայտվել են նամակագրությամբ Ֆլորերի, Տուրգենևի, Բալզակի, Մյուսեի, Լիստի, Միցկևիչի, Հայնեի, Գոնկուրի և այլոց հետ՝ ստեղծելով արվեստի, քաղաքական ու մտավոր կյանքի մի կենդարյա օրագիր: Անդրադառնալով «Ինդիանային» նա գնահատում է նրա ինքնաբերիկ հույզերը և նրա տառապանքը եսասիրության ու մարդկային ճշմարիտ զգացմունքների բացակայության, ինչպես նաև հասարակության մեջ մար-

դասիրության պակասի պատճառով: Թարգմանչուհին տեղեկացնում է, որ 1834թ. Ժ. Սանդը եղել է Սուրբ Ղազար կղզում և հիացել Մխիթարյանների գործունեությամբ, իսկ հետագայում «Մի ճանապարհորդի նամակները» (1834-36թթ.) գործի մեջ նկարագրել է Բայրոնի մեծ սերը հայ մշակույթի, Մխիթարյանների հանդեպ: Թարգմանչուհին չի մոռանում նշել, որ Ժ. Սանդը հայ ընթերցողին ծանոթ էր դեռևս անցյալ դարում, շնորհիվ կատարված թարգմանությունների:

### Գրականության ցանկ

1. «Մասյաց աղավնի» գրական ամսագիր, Փարիզ, 1863թ-ի, հ. 16
2. «Մասյաց աղավնի» գրական ամսագիր, Փարիզ, 1863թ-ի, հ. 19-20
3. «Հայկական աշխարհ» գրական և իմաստասիրական օրագիր, Թիֆլիս, 1869թ, հ. 10-11
4. «Փորձ» ազգային և գրական հանդես, Թիֆլիս, 1877թ., հ. 3
5. «Արձագանք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1882թ. , հ. 15
6. «Պրոլետար» թերթ, Աթենք, 1938թ. հ., 149
7. Ժ. Սանդ, «Օրիորդ լա Բենտինի», Չմյուռնիա, 1871թ., թարգմանությունն ու առաջաբանը Գր. Զիլինկիրյանի
8. Ժ. Սանդ, «Լեոնե Լեոնի» և «Ֆլավի», Չմյուռնիա, 1875թ, թարգմանությունն ու առաջաբանը Մսերյանի
9. «Ինդիանա», Երևան, 1992., թարգմանությունն ու առաջաբանը Ն. Վարդանյանի

## Georges Sand in the Reflections of Armenian Literature

*The works of Georges Sand, a prominent French writer of the 19th century, awakened a great interest in both the Western and Eastern literary frameworks of the 19th century with their freshness, humanism, philosophy, depth, the status of women in society and the defense of their rights. Its obvious proof is the Armenian translations of his numerous novels and the interpretations and analyses of his works in the press where journalists and translators praise the language he used. Speaking about Georges Sand's beautiful language Palasanyan dared to state that after Jean-Jacques Rousseau nobody used such a wonderful language and this fact makes the translator's task and responsibility harder.*

*Key words: translation, language, interpretation, analysis, writer, defense of women's rights.*

### Жорж Санд в армянских литературных отзывах

*Произведения известного французского писателя 19-ого века Жоржа Санда вызвали интерес современников как в западноармянских, так и восточноармянских литературных кругах своей новизной, человеколюбием, философским характером, глубиной, описанием положения женщин в обществе и отстаиванием их прав. Ярким свидетельством являются переводы многочисленных романов автора на армянский язык, а так же комментарии к другим произведениям и их обзор в прессе того времени, где переводчики и авторы статей восхваляют его литературный стиль. О выразительности языка Санда Паласян отметил, что после Ж. Ж. Руссо никто во Франции так не писал, что значительно осложняет работу переводчика.*

*Ключевые слова: перевод, язык, комментарий, обзор/анализ, писатель, автор статей, отстаивание прав женщин.*